ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 59

**«11» մայիսի 2021 թվական** **գյուղ Մայիսյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 44.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԻՄՔԸ, 430.38 ԵՎ 11.66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀԻՄՔԵՐԸ, 471.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԻՄՔԸ ԵՎ 71.81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի, 5-րդ և 8-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մայիսյան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 197-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջաջուռ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 194-Ն որոշման դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-077-0066-0015 կադաստրային ծածկագրով **5.65781** հեկտար հողամասում առկա **44.94** քառակուսի մետր մակերեսով հիմքը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշն համայնք գյուղ Մայիսյան, 13-րդ փողոց, 8/1 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20022020-08-0026) (այսուհետև՝ անշարժ գույք) օտարել՝ դասական աճուրդով:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-077-0066-0014 կադաստրային ծածկագրով **7.01968 հեկտար** հողամասում առկա **430.38 և 11.66** քառակուսի մետր մակերեսներով հիմքերը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 13-րդ փողոց, 8 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20022020-08-0027) (այսուհետև՝ անշարժ գույք) օտարել՝ դասական աճուրդով:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-077-0030-0033 կադաստրային ծածկագրով 0.01831 **հեկտար** հողամասում առկա **71.81** քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տունը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 1-ին փողոց, 2/1 կուլտուրայի տուն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05022021-08-0018) (այսուհետև՝ անշարժ գույք) օտարել՝ դասական աճուրդով:.

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային

նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-094-0008-0009 կադաստրային ծածկագրով **0.55079 հեկտար** հողամասում առկա **471.7** քառակուսի մետր մակերսով հիմքը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Ջաջուռ, 8-րդ փողոց, 22 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26062020-08-0024) (այսուհետև՝ անշարժ գույք) օտարել՝ դասական աճուրդով:

5.Աճուրդի դրված յուրաքանչյուր անշարժ գույքի համար սահմանել մեկ լոտ:

6.Աճուրդն անցկացնել 2021 թվականի հունիսի-------Մարմաշենի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, շենք 29), իսկ կրկնական աճուրդը՝ 2021 թվականի –հունիսի -:

7.Հիմք ընդունելով սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի մարտի 04-ի թիվ 03042111, 2021 թվականի մարտի 25-ի թիվ, թիվ 03252111 և 03252112 հաշվետվությունները և <<Կոստ Կոնսալտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի մարտի 26-ի թիվ Gn 21-146 հաշվետվությունը՝ անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ.

ա)որոշման 1-ին կետում նշված 44.94 քառակուսի մետր մակերեսով հիմքի և 5.65781 հեկտար հողամասի շուկայական արժեքի աճուրդով վաճառքի մեկնարկային գները հաստատել՝ **431655 (չորս հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր հիսունհինգ)** Հայաստանի Հանրապետության դրամ և **30133000 (երեսուն միլիոն հարյուր երեսուներեք հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ **30565000 (երեսուն միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ

բ)որոշման 2-րդ կետում նշված 430.38 և 11.66 քառակուսի մետր մակերեսներով հիմքերի և 7.01968 հեկտար հողամասի շուկայական արժեքի աճուրդով վաճառքի մեկնարկային գները հաստատել՝ 1292463 (մեկ միլիոն երկու հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր վաթսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ և 36763000 (երեսունվեց միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության

դրամ, ընդամենը՝ 38055000 (երեսունութ միլիոն հիսունհինգ հազար) Հայաստան Հանրապետության դրամ

գ)որոշման 3-րդ կետում նշված 71.81 քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տան և հողամասի շուկայական արժեքով աճուրդով վաճառքի մեկնարկային գները հաստատել՝ 561754 (հինգ հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ և 199983 (մեկ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր ութսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 760000 (յոթ հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

դ)որոշման 4-րդ կետում նշված 471.7 քառակուսի մետր մակերեսով հիմքի շուկայական արժեքով աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հաստատել՝ 216510 (երկու հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր տաս) Հայաստանի Հանրապետության դրամ:

8.Սույն որոշման 4-րդ կետում նշված անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակություն 08-094-0008-0009 կադաստրային ծածկագրով **0.55079 հեկտար** հողամասը ուղղակի վաճառքի արդյունքում հաղթող ճանաչված և գույքը գնած անձին, կադաստարային գնի նկատմամբ կիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշման 1-ին կետի <<դ>> ենթակետով սահմանված լրացուցիչ նվազեցնող 0.6 գործակիցը:

9.Հիմքերի և կուլտուրայի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի սահմանված կարգով կազմված հատակագծերը կցվուն են սույն որոշմանը:

10.Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

11.Աճուրդը կազմակերպելու նպատակով՝

1)ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

Կարեն Արշակյան - Մարմաշեն համայնքի ղեկավար

***Հանձնաժողովի անդամներ՝***

Արտյոմ Զաքարյան - Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Համլետ Գևորգյան - Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Արտաշես Դրմեյան-Մարմաշեն համայնքի ղեկավարի տեղակալ,

Արտաշ Եղիկյան -Մարմաշենի համայնքապետարանի գլխավոր մասնագետ,

Մամեդ Սալոյան-Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից:

2)աճուրդավար հաստատել հանձնաժողովի անդամ, Մարմաշեն համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արտաշես Դրմեյանին, արձանագրող հաստատել հանձնաժողովի անդամ, Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից՝ Մամեդ Սալոյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | *Կողմ՝* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝* |
|---|---|---|---|
| Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Պ. ՍԱՀԱԿՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |
| Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ | ---------- | ---------- | ---------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«11» մայիսի 2021 թվական

գյուղ Մայիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մարմաշեն համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 11 -ի թիվ 59 որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## 1□ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **Սույն** կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակություն 08-077-0066-0015 կադաստրային ծածկագրով **5□65781** հեկտար հողամասում առկա **44□94** քառակուսի մետր մակերեսով հիմքը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան, 13-րդ փողոց, 8/1 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20022020-08-0026), 08-077-0066-0014 կադաստրային ծածկագրով **7. 01968 հեկտար** հողամասում առկա **430. 38 և 11□66** քառակուսի մետր մակերեսներով հիմքերը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 13-րդ փողոց, 8 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20022020-08-0027), 08-094-0008-0009 կադաստրային ծածկագրով **0. 55079 հեկտար** հողամասում առկա **471□7** քառակուսի մետր մակերեսով հիմքը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Ջաջուռ 8-րդ փողոց, 22 հիմք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26062020-08-0024),

բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն 08-077-0030-0033 կադաստրային ծածկագրով 0□01831 **hekta8** հողամասում առկա **71□81** քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տունը (հասցե՝ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 1-ին փողոց, 2/1 կուլտուրայի տուն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 05022021-08-0018),

(այսուհետև՝ անշարժ գույք) աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ) գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 11 –ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 44.94 քառակուսի մետր մակերեսով հիմքը, 430□38 և 11□66 քառակուսի մետր մակերեսներով հիմքերը, 471.7 քառակուս մետր մակերեսով հիմքը և 71□81 քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տունը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու և աճուրդի կանոնակարգը հաստատելու մասին >> թիվ 59 որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը, հետևյալ անհատական կազմով՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

Կարեն Արշակյան – Մարմաշեն համայնքի ղեկավար

***Հանձնաժողովի անդամներ՝***

Արտյոմ Զաքարյան - Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Համլետ Գևորգյան - Մարմաշեն համայնքի ավագանու անդամ,

Արտաշես Դրմեյան - Մարմաշեն համայնքի ղեկավարի տեղակալ,

Արտաշ Եղիկյան -Մարմաշենի համայնքապետարանի գլխավոր մասնագետ,

Մամեդ Սալոյան Մարմաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակից:

3.Աճուրդի կազմակերպիչը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 11 –ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 44.94 քառակուսի մետր մակերեսով հիմքը, 430.38 և 11.66 քառակուսի մետր մակերեսներով հիմքերը, 471.7 քառակուսի մետր մակերեսով հիմքը և 71.81 քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տունը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու եվ աճուրդի կանոնակարգը հաստատելու մասին >> թիվ 59 որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

## II . ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.Աճուրդի դրված գույքի համար սահմանվում է մեկ Լոտ,

5.Աճուրդը անցկացվում է սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

6.Աճուրդն անցկացնել 2021 թվականի հունիսի_____-ին ժամը 12⁰⁰-ին Մարմաշենի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, շենք թիվ 29),

7.Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդի օրվանից 7-օրյա ժամկետում՝ 2021 թվականի հունիսի _____-ին ժամը՝ 12⁰⁰-ին, Մարմաշենի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան, 1-ին փողոց, շենք թիվ 29), որը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի համաձայն:

8.Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարկվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և (կամ) http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ:

9.Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերվում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն 15 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում՝ ցուցատախտակի վրա:

10.Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

11. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1)աճուրդային հանձնաժողովի անդամները (աճուրդի կազմակերպիչ),

2)համայնքի ավագանու անդամները,

3)աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

12.Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանվում է 2000 (երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

13.Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (Դիտորդ), ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (Դիտորդի) մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

14.Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդները), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

15. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1)չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2)չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

3)հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին՝ լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4)աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ առանց աճուրդավարի թույտվության,

5)չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը (աճուրդի մասնակիցների համար):

16.Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 11 -ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը համարվող 44.94 քառակուսի մետր մակերեսով հիմքը, 430.38 եվ 11.66 քառակուսի մետր մակերեսներով հիմքերը, 471. 7 քառակուսի մետր մակերեսով հինքը և 71.81 քառակուսի մետր մակերեսով կուլտուրայի տունը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու, աճուրդային հանձնաժողով ստեղծելու և աճուրդի կանոնակարգը հաստատելու մասին>> թիվ 59 որոշմամբ, հիմք ընդունելով անշարժ գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<Ա.Գ. ԷՍԹԵՅԹ>> և <<Կոստ Կոնսալտ>>>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հաշվետվությունները:

17.Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

18.Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

19.Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝ աճուրդի անցկացման օրվանից առնվազն մեկ օր առաջ:

20.Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային առաջարկ:

21.Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2021 թվականի -ից մինչև օգոստոսի -ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Մարմաշն համայնք գյուղ Մայիսյան, 13-րդ փողոց, 8/1 հիմք, Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 13-րդ փողոց, 8 հիմք, Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Ջաջուռ 8-րդ փողոց, 22 հիմք, Շիրակի մարզ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 1-ին փողոց, 2/1 կուլտուրայի տուն հասցեներում:

22.Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Մարմաշենի համայնքապետարանում՝ 2021 թվականի հունիսի -ից մինչև աճուրդի կայացման նախորդ օրը՝ ժամը 9:00-ից մինչև 17:00-ն:

23.Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

24.Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները, աճուրդի հաղթող մասնակիցը, ցանկության դեպքում՝ աճուրդի մյուս մասնակիցները (մասնակիցը):

25.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

26.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

27.Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և (կամ) գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

28.Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված և գույքը գնած մասնակցի կողմից:

29.Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին (մասնակիցներին) վերադարձվում է նախավճարը:

30.Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են 2021 թվականի -ից մինչև -ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն՝ Մարմաշենի

համայնքապետարանում, աճուրդային հանձնաժողովի կողմից: Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2020 թվականի -ը՝ մինչև ժամը 17:00-ն: Իսկ կրկնական աճուրդի հայտերն ընդունվում են՝ 2020 թվականի -ից մինչև սեպտեմբերի -ը ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն, նույն հասցեում:

31.Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1)հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2)ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3)իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4) նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորրագիրը:

32.Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

33.Աճուրդում վաճառված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

34.Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1)Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

2)աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3)աճուրդում հաղթած անձը չի կնքել առք ու վաճառքի պայմանագիր և /կամ/ չի մուծել գնման գինը:

35.Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

36.Աճուրդը և կրկնաճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպում և անցկացնում է սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

37.Սույն կանոնակարգի կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

38.Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

## III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

39.Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

40.Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

41.Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

42.Աճուրդավարը և արձանագրողը հաստատվում են աճուրդի կազմակերպչի որոշմամբ:

43.Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Մարմաշեն համայնքի ավագանու
2021 թվականի մայիսի 11-ի թիվ 59 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

*1. Գույքի սեփականատերը* ՝ ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնք:

*2. Աճուրդի անցկացման օրը, ժամը* ՝ 2021 թ. _____ -ին, ժամը 12-00-ին,

*3. Կրկնական աճուրդի անցկացման օրը, ժամը* ՝ 2021 թ. _____-ին ժամը 12-00-ին:

*4.Աճուրդի կազմակերպիչը* ՝ ՀՀ Շիրակի մարզի Մարմաշենի համայնքապետարան:

*5.Աճուրդի անցկացման վայրը /հասցեն/* ՝ ՀՀ Շիրակի մարզ Մարմաշեն համայնք (հասցեն՝ գյուղ Մայիսյան 1-ին փողոց, շենք թիվ 29):

*6.Աճուրդի ձևը և անցկացման կարգը* ՝ Բաց հրապարակային սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավել բարձր գին:

*7. Լոտերի քանակը՝4/չորս/:*

*8. Գույքի նկարագրությունը և մեկնարկային գինը* ՝

| Լոտ N | Գույքի անվանումը, գտնվելու վայրը | *Գույքի տեխնիկական տվյալները, ֆիզիկական բնութագրերի նկարագրությունը* | *Մեկնարկային գինը* |
|---|---|---|---|
| 1. | Հիմք (հասցեն՝ Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 13-րդ թողոց 8/1 հիմք) | *Ֆիզիկական բնութագրերի նկարագիրը*<br>*Հողամաս*<br>*Հողամասի մակերեսը 56578. 1 քմ: Հողամասի վրա այլ կառուցապատումներ և բարեկարգումներ բացակայում են:*<br>*Շինություններ*<br>*Հիմքի ընդհանուր մակերեսը՝44. 94քմ. Շինության նկարագիրը՝ Ե/բետոնյա շերտը քայքայված՝, արտաքինից շատ հատվածներում հանված՝մետաղական ամրանները, բետոնյա շերտը քայքայված, զգալի հատվածում մոտ 40 տոկոս, հիմքը կիսաքանդ վիժակում է: Հիմքի երեվացող հատվածներում բետոնը քայքայված է, մետաղական ձողերն և ամրանների հատվածները ժանգոտված են:Հիմքը գերքայքայված է:* | Գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքը՝ 30565000 (երեսուն միլիոն հինգ հարյուր վաթսունհինգ հազար)ՀՀ դրամ: |

| | | | |
|---|---|---|---|
| 2. | Հիմքեր (հասցեն՝Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 13-րդ փողոց 8 հիմք) | ***Ֆիզիկական բնութագրերի նկարագիրը***<br>*Հողամաս*<br>*Հողամասի մակերեսը 70196. 8 քմ:Հողամասի վրա այլ կառուցապատումներ և բարեկարգումներ բացակայում են:*<br>*Շինություններ*<br>*Թիվ 1 հիմքի ընդհանուր մակերեսը՝430. 38քմ: Ե/բետոնյա շերտը քայքայված է, արտաքինից շատ հատվածներումհանված է մետաղական ամրանները, բետոնյա շերտը քայքայված, զգալի հատվածում՝մոտ 60 տոկոս, հիմքը կիսաքանդ վիճակում է: Հիմքի երևացող հատվածներում մետաղական ձողերն և ամրանների հատվածները ժանգոտված են: Հիմքը գերքայքայված:*<br>*Թիվ 2 հիմքի ընդհանուր մակերեսը՝11. 66քմ: Ե/բետոնյա շերտը քայքայված է, արտաքինից շատ հատվածներում հանված է մետաղական ամրանները, բետոնյա շերտը քայքայված, զգալի հատվածում՝մոտ 60 տոկոս, հիմքը կիսաքանդ վիճակում է; Հիմքի երևացող հատվածներում մետաղական ձողերն և ամրանների հատվածները ժանգոտված են: Հիմքը գերքայքայված է:* | Գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքը՝ 38055000 /երեսունութ միլիոն հիսունհինգ հազար/ՀՀ դրամ: |
| 3. | Կուլտուրայի տուն /հասցեն՝Մարմաշեն համայնք գյուղ Մայիսյան 1-ին փողոց 2/1 կուրլտուրայի տուն/ | ***Ֆիզիկական բնութագրերի նկարագիր***<br>*Հողամաս*<br>*Հողամասի մակերեսը 183. 1 քմ: Հարթ հողամաս, հիմնականում կառուցապատված, ազատ տարածքը՝առանց բարեկարգումների:*<br>*Շինություններ*<br>*Կուլտուրայի տան ընդհանուր մակերեսը՝71. 81քմ, մեկ հարկ, քարե կրող պատերով: Շինության տեխնիկական վիճակը վատ, պատերի վրա նկատվում են ճաքեր, քարերի կարաների շաղախը քայքայված տեղամասերով: Շինության պատերը՝տուֆ քար, շինության տանիքը՝ ազբոշիֆեր փայտյա կավարամածով, բավարար վիճակի, ծածկը փայտյա, բարձրությունը՝4. 65 մ. , մետաղական դարպաս բավարար վիճակ, պատուհանների ապակիները բացակայում են, սենյակների պատերը առանց զաջասվաղի, հատակը բնահող:* | Գնահատվող անշարժ գույքի շուկայական արժեքը՝ 760000 /յոթ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Հիմք /հասցեն՝ Մարմաշեն համայնք գյուղ Ջաջուռ 8-րդ փողոց 22 հիմք | ***Ֆիզիկական բնութագրերի նկարագիր***<br>*Հողամաս*<br>*Հողամասի մակերեսը 0. 55079 հեկտար: Հարթ հողամաս, հիմնականում կառուցապատված, ազատ տարածքը՝առանց բարեկարգումների:*<br>*Շինություններ*<br>*Հիմքի ընդհանուր մակերեսը 471. 7քմ: Հիմքը գերքայքայված է:* | Հիմքի շուկայական արժեքը՝ 216510/երկու հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր տաս/ |

9.Աճուրդի պայմանները՝

1)Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք և համայնքները:

2)Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

ա)հայտ՝ սահմանված ձևանմուշով,

բ/ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

գ/իրավաբանական անձանց և համայնքների համար՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

դ/նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորագրերը:

3)Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են 2021 թվականի _____-ից մինչև _____-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն՝ Մարմաշենի համայնքապետարանում, աճուրդային հանձնաժողովի կողմից:

4)Հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2021 թվականի _____-ը՝ մինչև ժամը 17:00-ն:

4)Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

5)Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

6)Աճուրդի մասնակից չհամարվող անձանց /դիտորդի/ համար մուտքի տոմսի վճարը սահմանված է 1000 /մեկ հազար/ դրամ:

5)Աճուրդում հաղթած է համարվում այն մասնակիցը, ով աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

6)Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

10)Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Մարմաշենի համայնքապետարանում՝ 2021 թվականի _____-ից մինչև _____-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 9:00-ից մինչև 17:00-ն:

11)Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

12)Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպում և անցկացնում է սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ԱՐՇԱԿՅԱՆ